ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
(1864—1957)



Հուլիսի 11-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, 93 տարեկան հասակում, Սոփոմիոմ ի Տեր հանգյալ բազմավաստակ Տ. Կարապետ քահանա Կարապետյանը։

Հանգուցյալը ծնվել է Ախալքալակի շրջանի Մաջադյա գյուղում 1864 թվականին։ Սկզբնական կրթությունը նա ստանում է Ախալքալակի շրջանի Արագվա գյուղի ծխական դպրոցում, որն ավարտելուց հետո 1888 թվականին ուղարկվում է Ս. Էջմիածին, առավելապես հմտանալու հայ եկեղեցական արարողությունների և ծիսակատարությունների կատարման մեջ։ 1892 թվականին նա վերադառնում է հայրենի գյուղը և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում դրպրություն անում։ 1907 թվականին Սանահին վանքում Մաջադյա գյուղի համար ձեռնադրվում է քահանա։ 1936 թվականին տեղափոխվում է Սոփոմի քաղաքը, որտեղ պաշտոնավարում է մինչև իր մահը։

Հանգուցյալը իր հոտից սիրված քահանաներից էր։ 1951 թվականին Երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ. Կաթողիկոսի սրբատառ կոնդակով նա պարգևատրվել է քահանայական լանջախաչով, իր արդյունավետ և եկեղեցաշեն գործունեության համար։

Հանգուցյալը, իր նահապետական տարիքով հանդերձ, իսկական ներկայացուցիչն էր անցյալ սերնդի հայ քահանայության։

Հանգի՜ստ և խաղաղություն՝ իր հոգուն։



ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ